Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

352(47.925-22)
Հ-11

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

№ 42

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ

ՅԵՐԵՎԱՆ 1932

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱԽՀ—ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

09 SEP 2013 40.072

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, հնգամյակը 4 տարում ավարտելու և 2-րդ հնգամյակի վերջում անդասակարգ հասարակություն ստեղծելը, պահանջում է գյուղական խորհրդներից վերակառուցել իրենց աշխատանքները, հիմնականում ընդհուպ մոտենալով կոլտնտշինարարության մարտական խնդիրներին:

Անողոք պայքար պետք է մղել աջ և «ձախ» օպորտունիստական այն տենդենցների դեմ, վորոնք գտնում են, վոր համատարած կոլեկտիվացմամբ խորհուրդները պետք է վերացվեն կամ անդասակարգ հասարակություն ստեղծելու ժամանակ դասակարգային պայքար չի լինելու, և այդպիսով ջուր լցնում դասակարգային թշնամիների ջրաղացի վրա, նսեմացնում և թուլացնում են պրոլետարական դիկտատուրայի օրգանները:

Ընդհակառակը խորհուրդների վերակառուցման, նրանց դերի բարձրացման և ուժեղացման խնդիրը համատարած կոլեկտիվացման ժամանակ, վորպես պրոլետարական դիկտատուրայի օրգաններ, միշտ էլ մեր կուսակցության կողմից, վորպես առաջնակարգ հարց, սուր կերպով դրվել է: Կուսակցության 17-րդ կոնֆերանսը 2-րդ հնգամյակում սոցիալիստական հասարակարգ կառուցելու համար ընդգծել է հսկայական խնդիրներ: Գյուղատնտեսության բնագավառում 2-րդ հնգամյակում ուշադրության կենտրոնը դրված է կոլտնտեսությունները կազմակերպչորեն-տնտեսապես ամրապնդելու և կոլտնտեսական մասսաներին սոցիալիստական վերադաստիարակության խնդիրները:

Այդ խոշոր նշանակություն ունեցող խնդիրները կյանքում իրագործելու համար, մեծ աշխատանք պետք է կատարեն պրոլետարական դիկտատուրայի օրգանները գյուղում— գյուղ խորհուրդները, վորովհետև, «հետագայում ևս անխուսափելի յե դասակարգային պայքարի սրումն առանձին մոմենտներում, հատկապես առանձին շրջաններում և սոցիալիստական շինարարության առանձին բնագավառներում, վորը դրա հետ մեկտեղ ընդգծում է աշխատավորության առանձին խավերի ու խմբերի վրա բուրժուական ազդեցությունների մնալու, իսկ վորոշ դեպքերում նաև ուժեղանալու անխուսափելիությունը, պրոլետարիատին

352(47.925-22) 3-11 1 MAR 2010 1008 34694

խորթ դասակարգային ազդեցությունները դեռ յերկար ժամանակ բանվորների և անգամ կուսակցության մեջ թափանցելու անխուսափելիությունը: Այդ նկատառումով կուսակցության առաջ խնդիր է դրված ամրացնել պրոլետարական դիկտատուրան և էլ ավելի ծավալել պայքարն ընդդեմ օպորտունիզմի և հատկապես աջ թեքման, իբրև տվյալ շրջանի գլխավոր վտանգի» (17-րդ կուսկոնֆերանսի վորոշումներից):

Իսկ ինչպես պետք է վերակառուցվեն խորհուրդները յերեսով դեպի կոլտնտեսություն և առհասարակ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ներկա էտապում իրագործեն սոցիալիստական շինարարության բոլշևիկյան տեմպերը: Խորհուրդների վերակառուցումը պետք է հենվի կուսակցության 16-րդ համագումարի, Կենտկոմի դեկտեմբերյան և Հունիսյան պլենումների, խորհուրդների 6-րդ համագումարի վորոշումների հիման վրա և ընկ. ՍՏԱԼԻՆԻ պատմական վեց ցուցմունքների համաձայն: Խորհուրդները պետք է ղեկավար դեր կատարեն կոլտնտեսություններում՝ արտադրության կազմակերպելու, կոլտնտեսությունները տնտեսապես-կազմակերպչորեն ամրապնդելու գործում, իսկ բամբակացան շրջաններում 32 թ. համատարած կոլեկտիվացման աշխատանքն ավարտելու և նրա հիման վրա կուլակին, վորպես դասակարգի վերացնելու: Գյուղխորհուրդներն իրապես պետք է հենվեն այն նոր մասսայական ակտիվի վրա, վորն արդեն գյուղում ստեղծվել է հանձինս սոցիալիստական շինարարության ենտուզիաստների, հարվածային կոլտնտեսականների՝ ուժեղացնելով կապը մասսաների հետ:

Անհրաժեշտ է խորհուրդների շուրջը ծավալել կազմակերպչական մասսայական աշխատանք, վորի էյությունն է ուժեղացնել խորհուրդների դերը, վորպես պրոլետարիատի դիկտատուրայի ղեկավար օրգաններ, կազմակերպել բատրակության ու չքավորության խմբերի աշխատանքները, ծավալելու դասակարգային պայքարը կապիտալիստական տարրերի դեմ գյուղում, ամրացնել բատրակների-չքավորների կապը միջակների հետ, վերջիններիս մասնակից անելով բատրակ-չքավորական հավաքույթների, գյուղարտադրական խորհրդակցությունների և պատգամավորական խմբակների աշխատանքներին:

Գյուղխորհուրդների մասսայական աշխատանքների լավագույն ձևերից մեկն էլ պետք է համարել կոլտնտեսություններին, խորհտնտեսություններին, ՄՏԿայաններին և հիմնարկ-ձեռնարկներին կից պատգամավորական խմբակների կազմակերպման ու արտադրական խորհրդակցությունների վերակազմակերպման աշխատանքները: Նրանք մեծ նշանակություն ունեն այն պատճառով, վոր նրանց միջոցով ևս պետական կառավարման մեջ են մտնում գյուղի աշխատավորների ամբողջ ակտիվը. պատգամավորական խմբակների և արտադրական խորհրդակցությունների կազմակերպչական մասսայական աշխատանքները պետք է

ֆաղմվի ժողովրդական տնտեսության և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հիման վրա:

Սոցիալիստական վերակառուցման ներկա ետապում, յերբ մեզ մոտ՝ Հայաստանում աշխատավորական տնտեսությունների 40—45 տոկոսն ընդգրկված են կոլտնտեսություններում՝ արտադրական խորհրդակցությունների աշխատանքների վերակառուցման և ուժեղացման խնդիրները դառնում են հրամայողական պահանջ և այդ ասպարիզում պահանջվում է հատուկ ուշադրություն:

Մեր ձեռքի տակ յեղած փաստերը վկայում են այն մասին, որ դեռևս վորոշ շրջաններ թերագնահատում են արտադրական խորհրդակցությունների և պատղամավորական խմբակների դերը և նրանց կազմակերպչական աշխատանքները, վորոնք պետք է ավարտվեին մինչև ապրելի 20-ը, չի կատարված այդպիսին և մինչև իսկ վորոշ դեպքերում թողնված է ոպորտունիստական ինքնահոսի:

Գյուղխորհուրդներին կից արտադրական խորհրդակցությունների վերակազմակերպման դերի նման թերագնահատումը պետք է բացատրել նրանով, որ վորոշ շրջաններ՝ գտնում են արտադրական խորհրդակցություններ կազմակերպվելով նաև կոլտնտեսություններին կից՝ կազմակերպչական նման ձև ստեղծում է պարալելիզմ խորհրդների և կոլտնտեսությունների արտադրական խորհրդակցությունների միջև:

Ի՞նչ կասված, որ նման կարծիքը սխալ է, վորը նսեմացնում է արտադրական խորհրդակցությունների դերը գյուղատնտեսության վերակառուցման գործում: Արտադրական խորհրդակցությունների կանոնադրության մեջ ասվում է, որ նրանք կազմակերպվում են անխտիր բոլոր գյուղխորհուրդներին կից և խորհրդների նոր կանոնադրությունը, ընդգծելով կոլտնտշինարարության ասպարիզում արտադրական խորհրդակցությունների դերը, շեշտում է այն, որ «գյուղատնտեսական սեկցիաների աշխատանքները պետք է կառուցվի արտադրական խորհրդակցության ձևով, սեկցիան պետք է առանձին ուշադրություն դարձնի կոլտնտեսության և նրա արտադրության կազմակերպման, աշխատանքի ու կենցաղի բարելավման, արտադրողականության բարձրացման, կուլտ-կրթական աշխատանքների ծավալման և այլն»: Մյութենական կենտգործկոմին կից խորհրդային շինարարության հարցերի վերաբերյալ վերջերս կայացած խորհրդակցությունը կանդ առնելով արտադրական խորհրդակցությունների դերի մասին ընդգծել է, որ «գյուղում կապ-մասսայական աշխատանքների ծավալման խնդրում բացառիկ և կարևոր դեր է խաղում արտադրական խորհրդակցությունը, վորը հանդիսանում է գյուղխորհրդի կարևոր որգանը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հարցում: Համատարած կոլեկտիվացման պայմաններում արտադրական խորհրդակցությունները պետք է դառնան այդ կարևոր գործոններից մեկը, վորի միջոցով

կոլտնտեսություններում պետք է աշխատանքի կազմակերպումը և գործավարի ճիշտ կիրառումը դրվի իր կոչման բարձրության վրա. նա պետք է դլխավորի կոլտնտեսականների նախաձեռնությունը սոցմրցման ու հարվածայնության գործում և վճռական պայքար մղի կուլակների և նրանց գործակալների դեմ, վորոնք փորձում են պայթեցնել կոլտնտեսությունները: Գյուղատնտեսական սեկցիան պայքարում է հանուն ցանքսի տարածության ավելացման, բերքատվության բարձրացման, անասնապահության զարդացման, բերքահավաքը լավ կատարելու, հացամթերման պլանների կատարման և առհասարակ գյուղատնտեսության վերակառուցման ձեռնարկումների»: այստեղից պետք է յեզրակացնել, որ խորհրդներին կից արտադրական խորհրդակցությունները պետք է դրաղվեն և կազմակերպչական խնդիրներով կոլտնտեսության կազմակերպման, կոլտնտեսություններում կենցաղի վերակառուցման և կոլտնտեսությունը տնտեսապես, կազմակերպչորեն ամրապնդելու գործում:

Կոլտնտեսություններին կից արտադրական խորհրդակցությունների խնդիրներն այլ են. այստեղ նրանք կազմակերպվում են ըստ աշխատանքների բնույթի, ինչպես արտադրական ցեխերում, ըստ դաշտավարության, անասնապահության, բանջարաբուծության, տեխնիկական կուլտուրաների մշակության և այլն, կատարելով աշխատանքը դլխավորապես արտադրական ձևով և դլխավոր ասպարիզներում: Կոլտնտեսական արտադրական խորհրդակցությունն իր աշխատանքի ծավալով չի կարող հավասարվել խորհրդի արտադրական խորհրդակցության, վորը՝ վորպես ոժանդակ որդան՝ պետք է ոգնի խորհրդային կոլտնտշինարարության բնագավառում դեկավարությունն ուժեղացնելու տեսակետից:

Կոլտնտեսությունն իր ամբողջությամբ հանդիսանում է զուտ արտադրական միավոր և նրա աշխատանքների բնագավառում յեղած համապատասխան արտադրական խորհրդակցությունները նման են գործարանային ցեխերի արտադրական խորհրդակցություններին ու նրանց աշխատանքն ընթանում է միայն աշխատանքի տվյալ ասպարեզի արտադրողականության բարձրացման ուղղությամբ:

Գյուղխորհուրդն ամբողջությամբ հանդիսանում է բարձրագույն իշխանությունն իր տերրիտորիայում, իսկ նրան կից արտադրական խորհրդակցությունը նրա ոժանդակ որդանն է. նա քննարկում է կոլտնտեսության արդիֆնալները, կապակցում է դրանք գյուղխորհրդի ընդհանուր տնտեսական պլանների հետ և ամբողջությամբ համապատասխանեցնում է կուսակցության և իշխանության դիրեկտիվների հետ:

Այդ պլանների կատարումն ստուգելու համար արտադրական խորհրդակցությունը կատարում է իր ներկայացուցիչների միջոցով հետաքրքրություն և մասնակցում է կոլտնտեսական ամենորյա աշխատանք-

ներին: Ահա գյուղխորհուրդների արտադրական խորհրդակցությունների հիմնական աշխատանքները և նման ձևով է, որ հնարավոր է առավել ևս ուժեղացնել խորհուրդների ղեկավարությունը կոլտնտեսությունների վրա: Այստեղից և յեղրակացություն, որ գյուղխորհուրդներին կից գյուղատնտեսական սեկցիաների (արտադրական խորհրդակցությունների) և կոլտնտեսությունների արտադրական խորհրդակցությունների մեջ աշխատանքի պարալելիզմ վոչ մի դեպքում չի ստեղծվի և անհրաժեշտ է նոր թափ հաղորդել արտադրական խորհրդակցությունների աշխատանքներին:

Ինչ վերաբերվում է պատգամավորական խմբակներին, նրանք պետք է գլխավորեն մասսաների ակտիվությունը, հարվածային բրիգադների միջոցով ոգնություն հասնեն հետ մնացող բրիգադներին և նրանց արտադրական խորհրդակցություններին: Նրանք պետք է դառնան հաղթամարտիկները կոլտնտեսությունների ճեղքվածքները ժամանակին վերացնելու, արդիֆինպլանները կատարելու–գերակատարելու և ներքին միջոցների մոբիլիզացիայի գործում, գլխավորելով վողջ կոլտնտեսական մասսաներին այդ ասպարիզում: Պատգամավորական խմբակները պետք է իրենց նիստերում լսեն բրիգադներին, կոլտնտեսության արտադրական խորհրդակցությունների զեկուցումները: Գյուղխորհուրդները կոլտնտեսությունների նկատմամբ ձեռնարկված միջոցների համար պետք է վաղորդ վերցնեն պատգամավորական խմբակների կարծիքները, կոլտնտեսությունների զեկուցումները լսելիս՝ պետք է քննարկեն նաև պատգամավորական խմբակների հարակից զեկուցումները· այդ միջոցը կբարձրացնի նաև պատ· խմբակի հեղինակությունը և վերջինս առավել ևս իր ժամանակին կոլտնտեսության աշխատանքներում նկատվող ճեղքվածքների մասին կազդանշի խորհրդին: Պետք է աշխատանքները դնել այնպես, վորպեսզի սեկցիաները զբաղվեն կոլտնտեսության ընդհանուր բնույթ կրող հարցերով, իսկ պատգամավորական խմբակը կոլտնտեսության ներքին կյանքին վերաբերող խնդիրներով և վերջապես սեկցիաներն իրենց բոլոր ձեռնարկումները կոլտնտեսություններում պետք է կիրառեն պատգամավորական խմբակների միջոցով: Աշխատանքի նման դրվածքը կբարձրացնի պատգամավորական խմբերի հեղինակությունը և անդամների պատասխանատվության զգացմունքը կոլտնտեսության աշխատանքների բարելավման և արդիֆինպլանների կատարման, գերակատարման համար և միաժամանակ այդ աշխատանքների պրոցեսում կոլտնտեսություններից առաջ կբաշվեն նոր կադրեր խորհրդային աշխատանքների համար:

Այս բոլոր ձեռնարկված միջոցները կբարձրացնեն նաև ընդհանրապես խորհրդների հեղինակությունը և դերը ժողովրդական տնտեսության և սոցիալիստական շինարարության գործում: Գյուղխորհուրդների ավելի ուժեղ և վճռական շրջադարձը յերբեսով դեպի կոլտնտեսություն կարտահայտվի առավել ևս, յերբ նրանք ամրապնդեն և ուժեղացնեն պատգամավորական խմբակների և արտադրական խորհրդակցությունների աշխատանքները:

Պ· ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ)

(Հաստատված է ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահության կողմից 1932 թ· փետրվարի 13–ին)

1· Գյուղի աշխատավորության լայն մասսաները գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման աշխատանքներին մասնակից անելու, կոլեկտիվացումն ամրապնդելու և ավարտելու, կոլեկտիվացման հիման վրա կուլակությունը վորպես դասակարգ խպառ վերացնելու, նաև գյուղատնտեսության ղեկավարման գործում գյուղխորհուրդներին ոգնություն ցույց տալու նպատակով, գյուղական խորհրդներին կից անպայման կազմակերպվում են գյուղատնտեսական սեկցիաներ:

2· Գյուղխորհրդների գյուղատնտեսական սեկցիաների կազմի մեջ մտնում են գյուղխորհրդների և վերադաս գործիքների անդամներն ու թեկնածուները· սեկցիաների աշխատանքներին մասնակից են արվում նաև կոլտնտեսական բանվորները, չքավորները, միջակ գյուղացիները և աշխատավոր ինտելիգենցիան:

3· 2–րդ հոդվածում հիշված անձինք ներգրավվում են սեկցիաների մեջ գյուղխորհրդների, պատգամավորական խմբակների, չքավորական ու բատրակային խմբակների, կուսակցական, արհեստակցական կազմակերպությունների և կանանց պատգամավորական ժողովների միջոցով· յուրաքանչյուր թեկնածուն ընտրվում է առանձին:

4· Գյուղատնտեսական սեկցիաների կազմը հաստատում են գյուղխորհրդների նախագահությունները:

5· Գյուղատնտեսական սեկցիաների աշխատանքները սիստեմատիկաբար ղեկավարելու համար ընտրվում են 3—5 հոգուց բաղկացած բյուրո: Սեկցիայի բյուրոն և ղեկավարը հաստատվում են գյուղխորհրդների նախագահության կողմից: Սեկցիայի աշխատանքները տեխնիկապես ղեկավարելու համար բյուրոն ընտրում է քարտուղար:

6· Գյուղատնտեսական սեկցիան իրականացնում է հետևյալ հիմնական խնդիրները:

Ա· ԿՈԼԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

ա) Անհրաժեշտ աշխատանքներ է կատարում համատարած կոլեկտիվացումն ավարտելու և աջակցում է գյուղխորհրդին կուլակությունը վորպես դասակարգ խպառ վերացնելուն· միջոցներ է ձեռք առնում գյուղություն ունեցող կոլտնտեսություններն ամրապնդելու, և անհատա-

կան չքավոր ու միջակ տնտեսությունների ներգրավման միջոցով նոր կոլտնտեսություններ կազմակերպելու համար.

բ) համապատասխան աշխատանքներ է կատարում արտադրական պարզ միավորները վերածելու կոլտնտեսական շինարարության ավելի բարձր ձևերի, առավելագույն չափով հանրայնացնելով արտադրության գործիքներն ու միջոցները.

գ) կազմում է գյուղխորհրդի կոլտնտեսական շինարարության պլանը և ներկայացնում է գյուղխորհրդի նախագահությանը կամ պլենումին՝ ի հաստատություն.

դ) նախապես քննության է առնում կոլտնտեսությունների արտադրական պլանները և այդ մասին տալիս է գյուղխորհրդին իր եզրակացությունները.

ե) հսկում է կոլտնտեսությունների գործառնական բոլոր աշխատանքները, անհրաժեշտ դեպքերում միջոցներ է ձեռք առնում վերացնելու այդ աշխատանքներում նկատված թերությունները, նաև այդ մասին անմիջապես ազդանշում է գյուղխորհրդներին.

զ) լսում և քննության է առնում կոլտնտեսությունների, նրանց արտադրական մասերի և առանձին բրիգադների զեկուցումները.

ը) հսկում է, վորպեսզի թե՛ ամբողջ կոլտնտեսության մեջ և թե՛ նրա զեկավար մարմիններում կիրառվի դասակարգային հստակ գիծը.

թ) ներկայացնում է գյուղխորհրդին կոլտնտեսական շինարարության ձեռնարկումների վերաբերյալ առաջարկները.

ժ) աջակցում է կազմակերպել, ամրապնդել կոլտնտեսական ֆերմաներ:

Բ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

ա) Մշակում է գյուղխորհրդի տերրիտորիայի սահմաններում գտնվող գյուղատնտեսության զարգացման պլանը.

բ) մշակում է բերքատվությունը բարձրացնելու վերաբերյալ ձեռնարկումներ.

գ) մշակում է միջոցներ գյուղխորհրդի սահմաններում ագրոմինիմումն ու զոոմինիմումն իրականացնելու համար.

դ) մշակում և իրականացնում է անհրաժեշտ ձեռնարկումներ՝ կոլտնտեսություններում աշխատանքը կանոնավոր կերպով կազմակերպելու, գործավարձ կիրառելու և կոլտնտեսության բոլոր ոլորտներում առավելագույն չափով իրականացնելու համար.

ե) մշակում և աջակցում է իրականացնել ցանքի և բերքահավաքի կամպանիաների պլանները.

զ) նպաստում է գյուղատնտեսության մեքենայացմանը, հսկում է, վորպեսզի արտադրության միջոցները կանոնավոր և ռացիոնալ կերպով ոգտագործվեն և կազմակերպում է նորոգման արհեստանոցներ:

ը) հսկում է, վորպեսզի ժամանակին ստեղծվեն սերմացուների և կերի ապահովագրական ֆոնդեր, զեկավարելով հացահատիկային գոտի կետերի կազմակերպումը.

թ) մշակում և հսկում է, վորպեսզի իրականացվեն պարարտանյութերի ոգտագործման և կիրառման վերաբերյալ ձեռնարկումներ.

ժ) մշակում է վնասատուների դեմ պայքարելու պլանները և հսկում է, վորպեսզի այդ պլաններն իրականացվեն.

ի) կատարում է կոնտրակտացիայի վերաբերյալ աշխատանքներ և այդ նպատակով քննության է առնում կոնտրակտացիայի վերաբերյալ կնքվող պայմանագրերը.

լ) նախապես քննության է առնում և իր եզրակացությունն է տալիս վարկեր տրամադրելու մասին կոլտնտեսությունների կողմից հարուցած միջնորդությունների առթիվ—հսկելով, վորպեսզի այդ վարկերը նպատակահարմար կերպով ոգտագործվեն.

խ) մշակում է ձեռնարկումներ, վորպեսզի կոլտնտեսությունների և անհատական տնտեսությունների միջոցները ներգրավվեն ագրո—կուլտուր արտադրական կետերում.

ծ) աջակցում է խորհտնտեսություններին և մեքենա-տրակտորային կայաններին՝ արտադրական պլանները կատարելու և կոլտնտեսություններին ոգնություն ցույց տալու համար

կ) սոցիալ-կուլտուրական սեկցիայի հետ միասին զեկավարում է ընտրողների գյուղատնտեսական անգրագիտությունը վերացնելու, նրանց մեջ ագրո—կուլտուր գիտելիքներ տարածելու աշխատանքները, կազմակերպելով ցուցադրական փորձադաշտեր, ցուցահանդեսներ և այլն, նաև դասընթացների, խմբակների, զրույցների, զեկուցումների, եքսկուրսիաների և այլն միջոցով պատրաստելով կադրեր.

հ) մշակում է անհրաժեշտ ձեռնարկումներ, վորպեսզի կոլտնտեսություններն ու անհատական տնտեսություններն անցնեն հողագործության լավագույն ձևերին.

ձ) սիստեմատիկաբար հսկողություն է ունենում, վորպեսզի չքավորներին տրված արտոնություններն ոգտագործվեն ճիշտ դասակարգային գծով, կազմակերպելով չքավոր անհատական ու կոլեկտիվ տնտեսությունների նկատմամբ ավելի ուժեղ տնտեսությունների կողմից ոգնություն.

ղ) ծանոթացնում է բնակչությանը գյուղատնտեսության վերելքի վերաբերյալ կառավարության ձեռնարկումների, նաև հողային օրենքների հետ:

Գ. ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

ա) Հաստատված պլանների համաձայն մշակում է առանձնապես տվյալ շրջանի անասնաբուծության զարգացման վերաբերյալ ձեռնարկումներ.

բ) կատարում է անհատական անասնապահական տնտեսությունները կոլեկտիվացնելու և անասնաբուծական կոլտնտեսությունները զարգացնելու վերաբերյալ աշխատանքներ.

գ) մշակում է անհրաժեշտ ձեռնարկումներ կոլտնտեսություններում անասունների վորակը բարելավելու և ցեղական անասունների քանակն ավելացնելու համար.

դ) հսկում է, վորպեսզի կոլտնտեսություններն ավելի ռացիոնալ ոգտագործեն իրենց անասունները և կանոնավոր հոգատարություն ունենան նրանց նկատմամբ.

ե) մշակում է խոտացանքերի և կերի մթերման, նաև սիլոսացման պլանները, հսկելով, որ այդ ձեռնարկումները կատարվեն ժամանակին.

զ) միջոցներ է ձեռք առնում, որպեսզի անասուններն անասնաբուժական անձնակազմով սպասարկվեն կանոնավոր.

ը) միջոցներ է ձեռք առնում, պայքարելու անասունների համաճարակների և վարակիչ հիվանդությունների դեմ, հսկելով, որ ժամանակին կատարվեն անասունների պատվաստումներ, հատկացվեն անասուններ թաղելու վայրեր, մեկուսացնելու հիվանդ անասուններին և այլն:

Դ. ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ՏԵՐԻՏՈՐԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

ա) Ցեղրակացություններ է տալիս հողաշինարարության պլանների և նախագծերի վերաբերյալ և հսկում է նրանց կանոնավոր կատարման վրա.

բ) հսկում է, որպեսզի կոլտնտեսություններն ու անհատական տնտեսությունները կանոնավոր ոգտագործեն հողային ֆոնդը, հայտնաբերում է չոգտագործվող հողերը.

գ) մշակում է մելիորացիայի և վառոդման պլանները և հսկում է այդ պլանների կատարման վրա.

դ) հսկում է, որպեսզի հողաշինարարության վերաբերյալ կառավարական որոշումներն ու կարգադրությունները կանոնավոր և ժամանակին կատարվեն:

Ե. ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՅԼ ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ա) Ընտրողների շրջանում ծավալում է մասսայական լայն աշխատանքներ, մոտեցնելով այն՝ բրիգադներին, կոլտնտեսություններին, կոլտնտեսությունների արտադրական մասերին, խորհտնտեսություններին, մեքենա—տրակտորային կայաններին և արտադրությանը, կատարելով այն՝ դաշտերում, կենտրոնացնելով բանվորների, կոլտնտեսական և չքավոր ու միջակ մասսաների ուշադրությունը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բոլոր պլաններն ու առաջադրությունները կենսագործելու վրա.

բ) կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում և մեքենա-տրակտորային կայաններում, նաև նրանց միջև ու սեկցիաներում կազմակերպում և սոցմրցում և հարվածայնություն՝ աշխատանքների նկատմամբ լավագույն ցուցանիշների հասնելու համար, լայն չափերով կիրառում և նաև հասարակական բուքսիրը, միջանցիկ բրիգադները, հանդիպական պլանները և այլն.

գ) կատարում են կանանց շրջանում աշխատանքներ, անհրաժեշտ դեպքերում գումարում են սեկցիաների կին անդամների ժողովներ, կազմակերպում են կանանց բրիգադներ.

դ) բյուրոյում կամ սեկցիայի պլենումում քննության են առնում՝ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման վերաբերյալ բոլոր հարցերը.

ե) անհրաժեշտ դեպքերում կոլտնտեսություններում և գյուղական ձեռնարկություններում ու հիմնարկներում կատարում են քննությունը, հետագայում դրա արդյունքները քննության առնելով բյուրոյում կամ սեկցիայի պլենումում.

զ) բյուրոյում և սեկցիայի պլենումում լսում են կոլտնտեսությունների և գյուղական ձեռնարկությունների ու հիմնարկների ղեկավարող աշխատակիցների զեկուցումները և այդ մասին կայացնում են համապատասխան վորոշումներ:

7. Սեկցիաների առաջ դրված կոնկրետ խնդիրները կատարելու և նրանց աշխատանքները ճկունացնելու համար ամբողջ սեկցիան բաժանվում է ժամանակավոր և շարժական բրիգադների, բրիգադների քանակն ու անվանումը վորոշվում են սեկցիաների առաջ դրված խնդիրների համապատասխան:

8. Սեկցիաները կարող են կազմակերպել մոտավորապես հետևյալ ժամանակավոր շարժական բրիգադները՝

ա) կոլեկտիվացման,

բ) կոլտնտեսությունների աշխատանքի կազմակերպման և գործավարձի իրականացման,

գ) ցանքի նախապատրաստման,

դ) բերքահավաքի նախապատրաստման,

ե) բերքատվության բարձրացման,

զ) անասնաբուծության զարգացման,

ը) սոցմրցման և հարվածայնության,

թ) վարուցանքի,

ժ) կոլտնտեսությունների յեկամուտների կանոնավոր բաշխման,

ի) հողաշինարարության և ջրտնտեսության,

լ) սեկցիայի աշխատանքների ստուգման և այլն:

9. Սեկցիաներն ու բրիգադներն իրենց աշխատանքների ընթացքում հենվում են գյուղխորհուրդներին կից պատգամավորական խմբակների, կոլտնտեսություններին, խորհտնտեսություններին և ՄՏԿայաններին կից արտադրական խորհրդակցությունների, արհեստակցական և հասարակական կազմակերպությունների, հարվածայինների, բանվորների և կոլտնտեսականների վրա:

10. Սեկցիաներն իրենց բոլոր աշխատանքները կատարում են գյուղխորհրդի պլենումի և նախագահության կողմից հաստատված պլանով:

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահ՝
Ա. ԱՆԱՆՅԱՆ

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի քարտուղար՝
Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՄՏԿԱՅԱՆՆԵՐԻՆ ՅԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ

(Հաստատված է ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության կողմից 1932 թ. հունվարի 11-ին)

Հնգամյակը չորս տարում կատարելու համար գյուղական խորհուրդների առաջ դրված գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման, համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակին վորպես դասակարգ վերացնելու և ամբողջ ճակատում սոցիալիստական հարձակումն իրականացնելու ասպարեզում խոշորագույն խնդիրները պահանջում են բարձրացնել խորհուրդների դերը, վորպես կիրառողների կուսակցության գլխավոր գծի, վորն անհաշտ թշնամական է, թե աջ և թե «ձախ» ոպորտունիզմին, նաև վճռականապես վերակառուցել խորհուրդների աշխատանքները, այն հաշվով, վորպեսզի մոբիլիզացիայի յենթարկվեն կոլտնտեսական, բատրակ ու չքավոր և միջակ մասսաներն այդ խնդիրները գործնականորեն իրագործելու համար:

Գյուղական խորհուրդների անդամները, վորպես գյուղի աշխատավորական մասսաների ներկայացուցիչներ, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման առաջավոր աշխատավորներ, պետք է գյուղական խորհուրդների ամենօրյա աշխատանքներում ցույց տան ամենայն, ակտիվ մասնակցություն, ամեն կերպ նպաստեն խորհուրդներին նրանց առաջադրված խնդիրներն իրագործելուն (գյուղական խորհուրդներ կազմակերպելու մասին հաստատված ՀՍԽՀ Կենտգործկոմի կողմից կանոնադրության 74-րդ հոդվածը):

Խորհրդների ամենօրյա աշխատանքների մեջ գյուղական խորհրդականների, վերստուգիչ հանձնաժողովների, և վերադաս գործկոմների անդամներին ու թեկնածուներին ել ավելի կազմակերպված ձևով ներգրավելու, նաև խորհրդների անդամների և ընտրողների միջև մնայուն կապ հաստատելու, բանվորներին, կոլտնտեսականներին, բատրակներին, չքավորներին և միջակներին խորհրդային շինարարության աշխատանքներին մասնակից անելու և խորհրդային մասսայական աշխատանքները ձեռնարկություններին (խորհտնտեսություններ, ՄՏԿայաններ և կոլտնտեսություններ) մոտեցնելու նպատակով, գյուղ խորհրդների տերիտորիայի վրա կազմակերպվում են պատգամավորական խմբակներ:

1. Պատգամավորական խմբակները կազմակերպվում են կոլտնտեսություններին, արտադրական ձեռնարկություններին, խոշոր կոլտնտեսություններին, խորհտնտեսություններին և ՄՏԿայաններին կից, յեթե մատնանշված կազմակերպություններում կան գյուղխորհրդի, վերստուգիչ հանձնաժողովի և վերադաս գործկոմների անդամների ու թեկնածուների թվից վոչ պակաս, քան 3 հոգի:

Դանոթություն.— Այն դեպքերում, յերբ գյուղխորհրդի տերիտորիան ընդգրկում է մեկ փոքր գյուղ-կոլտնտեսություն, խորհրդային խմբակներ չեն կազմակերպվում:

2. Գյուղխորհրդի, վերստուգիչ հանձնաժողովի և վերադաս գործկոմի յուրաքանչյուր անդամն ու թեկնածուն այն դեպքերում, յերբ ձեռնարկության, խորհտնտեսության, կոլտնտեսության և ՄՏԿայանին կից կազմակերպված է պատգամավորական խմբակ, պարտավոր է լինել խմբակի կազմում և ակտիվ մասնակցություն ցույց տալ նրա աշխատանքներին. պատգամավորական խմբակը ղեկավարում է խմբակի անդամներից մեկը, վորին հաստատում է գյուղխորհուրդը. պատգամավորական խմբակի առաջադրությունների կատարումը հաշվառման յենթարկելու համար խմբակն իր կազմից ընտրում է քարտուղար:

Դանոթություն.— Մեծ ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, ՄՏԿայաններում, խորհտնտեսություններում, վորտեղ ընտրվածների թիվը 8 անդամից ավելի յե (հոդվ. 1-ին), կազմակերպվում է 3 հոգուց բաղկացած բյուրո:

3. Պատգամավորական խմբակներն իրագործում են հետևյալ հիմնական խնդիրները՝

ա) ակտիվ աջակցություն են ցույց տալիս գյուղխորհրդին իրականացնել գյուղատնտեսությունը սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու անհատական չքավոր ու միջակ տնտեսությունները, կոլտնտեսությունների մեջ ներգրավելու, կոլտնտեսություններն ամրապնդելու և համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակին վորպես դասակարգ վերացնելու վերաբերյալ կուսակցության և խորհրդային իշխանության ձեռնարկումները.

բ) ողնություն են ցույց տալիս կոլտնտեսություններին և անհատական չքավոր ու միջակ տնտեսություններին գյուղատնտեսությունը զարգացնելու համար. կազմակերպում և միջոցներ են ձեռք առնում բարձրացնելու ձեռնարկությունների, կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների և ՄՏԿայանների աշխատանքի արտադրողականությունը, բարձրացնելու բերքատվությունը, ընդարձակելու ցանքսերի տարածությունը, գյուղատնտեսությունը մեքենայացնելու, կոլտնտեսություններում յեկամուտներն իր ժամանակին բաշխելու, կենդանաբուծության, բանջարաբուծության, այգեգործության, թռչնաբուծության և մեղվաբուծության զարգացմանը, աշխատավոր մասսաների ակտիվությունը մոբիլիզացիայի յենթարկելու ցանքի, բերքահավաքի, աշնան վարի և կոնտրակտացիայի պլանները կատարելու համար.

գ) ձեռք են առնում անհրաժեշտ միջոցներ և կազմակերպում են մասսայական աշխատանքներ հացահատիկների, անասունների, բրդի մթերման և այլ մթերումների վերաբերյալ պլանները կատարելու համար.

դ) պաշտպանում են բատրակների և չքավորների իրավական շահերը.

ե) միջոցներ են ձեռք առնում իրագործելու ընդհանուր նախնական

պարտադիր ուսումը, վերացնելու անգրագիտությունը, բարելավելու խորհրդային հիմնարկների սանիտարական դրությունը, ամենալայն աջակցություն են ցույց տալիս դպրոցներին, լիկեյաններին, խրճիթ-ընթերցարաններին, կարմիր անկյուններին, հիվանդանոցներին, բժշկական և անասնաբուժական կայաններին.

զ) աջակցում են գյուղխորհրդներին գյուղբյուջեն ամրապնդելու և իրականացնելու գործում, հսկում են, վորպեսզի գյուղխորհրդների կողմից կուլտուր-տնտեսական կարիքների համար բաց թողնվող միջոցները ծախսվեն կանոնավոր, միջոցներ են ձեռք առնում, վորպեսզի կոլտնտեսությունները և գյուղացիական անհատական տնտեսությունները ժամանակին կատարեն իրենց բոլոր պարտավորությունները պետության հանդեպ, նաև կատարում են գյուղհարկը, արհեստագործական հարկը, ինքնահարկումը, կուլտ-տուրքը, ապահովագրական վճարումները, գյուղվարկի ապառիկները, սերմֆոնդերը դանձելու, փոխառությունները և բնակչության միջոցները խնայողական դրամարկղներում մոբիլիզացիայի յենթարկելու վերաբերյալ գյուղխորհրդների առաջադրությունները.

ը) աջակցում են կոոպերացիայի աշխատանքներին, հսկում են, վորպեսզի արդյունաբերական ապրանքները բաշխվեն կանոնավոր, և կազմակերպում են սպառկոոպերացիայի վայրավճարների դանձման աշխատանքները.

թ) միջոցներ են ձեռք առնում կենցաղը սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու համար.

ժ) տեղական տնտեսության և բարեկարգության սպասարկում, կատարում են գյուղխորհրդի առաջադրությունը, ակտիվ կերպով աջակցելով գյուղխորհրդին իրականացնել ճանապարհային շինարարության, ճանապարհների և ճանապարհային կառուցվածքների պահպանության, ջրամատակարարման և հրդեհային պահպանության գործի վերաբերյալ ձեռնարկումներ, աջակցում են տնայնագործական-արհեստագործական կոոպերացիայի զարգացմանը.

ի) աջակցություն են ցույց տալիս միլիցիայի մարմիններին հանցագործության դեմ պայքարելու աշխատանքներին և հեղափոխական օրինականությունը պահպանելու գործին.

լ) կատարում են գյուղխորհուրդների այլ առաջադրությունները.

խ) ժամանակին ազդանշում են գյուղխորհրդին աշխատանքների այն բոլոր թերությունները, վորոնք նկատվում են ձեռնարկություններում, խորհտնտեսություններում, ՄՏԿայաններում և կոլտնտեսություններում:

4. Պատգամավորական խմբակներն իրականացնում են բոլոր ձեռնարկումներն իրենց ձեռնարկությունների, խորհտնտեսությունների, ՄՏԿայանների և կոլտնտեսությունների սահմաններում և միաժամանակ ողնում են հետ մնացածների աշխատանքներին:

5. Պատգամավորական խմբակները բոլոր ձեռնարկումներն իրականացնում են ծավալելով մասսայական աշխատանքներ, կազմակերպելով գյուղի կոլտնտեսական, բատրակ ու չքավոր և միջակ մասսաների ակտիվությունը և ընթացք տալով նրանց ստեղծագործական նախաձեռնությանը, գյուղխորհուրդների բոլոր ձեռնարկումները կատարելու համար արդ նպատակով՝

ա) գյուղխորհրդի առաջադրությամբ և իրենց նախաձեռնությամբ տնտեսա-կուլտուրական շինարարության և տնտեսա-քաղաքական կամպանիաների շուրջը դումարում են ընտրողների ժողովներ.

բ) գյուղխորհրդի հանձնարարությամբ և իրենց նախաձեռնությամբ մշակում են իրենց խորհտնտեսության, ձեռնակրության, կոլտնտեսության և ՄՏԿայանների աշխատանքներին վերաբերող հարցերը և արդյունքները ներկայացնում են գյուղխորհրդի նախագահությանը կամ պլենումին, արտադրական խորհրդակցությանը և գյուղխորհրդի համապատասխան սեկցիային՝ ի քննություն.

գ) կազմակերպում են սոցմրցում և հարվածայնություն, լայն կերպով ողտագործելով աշխատանքի սոցիալիստական յեղանակները, հանդիպական պլանը, հասարակական բուքսիրը, միջանցիկ բրիգադները, տաղնապը և այլն.

դ) իրենց շուրջը կազմակերպում են ակտիվը և նրա հետ կատարում են աշխատանքներ, անհրաժեշտ դեպքում կազմակերպում են ժամանակավոր բրիգադներ՝ առաջադրված աշխատանքները կատարելու համար.

ե) աջակցում են գյուղխորհրդներին կից գործող չքավորական խմբակների, արտադրական խորհրդակցությունների, սեկցիաների և հանձնաժողովների աշխատանքներին՝ գյուղխորհրդների առաջադրությունները կատարելու համար.

զ) մասսայական լայն աշխատանքներ են ծավալում կոլտնտեսուհիների, բատրակուհիների, չքավորուհիների և միջակուհիների շրջանում, նրանց ներգրավում են խորհրդային և կոլտնտեսական շինարարության մեջ. աջակցում են կանանց հետագա ազատագրմանը, կազմակերպելով կենցաղային հիմնարկներ (մսուրներ, մանկական հրապարակներ, մանկապարտեզներ, հասարակական սննդի կազմակերպություններ և այլն).

ը) աշխատանքներ են ծավալում ազդային փոքրամասնության ընտրողների միջև, ներգրավելով գյուղխորհրդների և նրանց տնտեսական, կուլտուրական, կենցաղային պահանջները սպասարկելու աշխատանքների մեջ.

թ) ներգրավում են կոլտնտեսական, բատրակ, չքավոր և միջակ յերիտասարդներին խորհրդային իշխանության մասսայական աշխատանքների մեջ.

ժ) պարզաբանում են ընտրողներին գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների և գյուղխորհրդների սեկցիաների խնդիրները, մասնակից անելով ընտրողների ակտիվը սեկցիաների աշխատանքներին.

ի) կազմակերպում են գյուղական խորհրդների անդամների հերթապահությունը՝ ընտրողների գյուղական խորհրդի աշխատանքների մասին պարզաբանումներ և տեղեկանքներ տալու, նաև՝ խորհրդային իշխանության որենքների և կարգադրությունների մասին պարզաբանումներ տալու համար.

լ) կազմակերպում են գյուղական խորհրդների անդամների կանոնավոր հաշվետվությունն ընտրողների առաջ և հետևում են ընտրողների կողմից տրված հրահանգի կիրառմանը:

40.072

5328

6. Անհրաժեշտության դեպքում պատգամավորակ[illegible] գյուղխորհրդների ղեկավարությամբ և առաջադրությամբ քննում են այն կոլտնտեսությունների, ձեռնարկությունների, կոոպերացիայի և կուլտուր-կենցաղային հիմնարկների աշխատանքները, վորոնք գտնըվում են պատգամավորական խմբակների գործունեյության շրջաններում, և առաջարկություններն ու յեզրակացությունները ներկայացնում են գյուղխորհրդին՝ ի հաստատություն:

7. Գյուղական խորհրդների և վերադաս գործկոմների անդամների կապն ընտրողների հետ ել ավելի ամրապնդելու և գյուղխորհրդների առաջադրությունները կարճ ժամանակում կատարելու նպատակով, պատգամավորական խմբակների յուրաքանչյուր անդամն ամրացվում ե վորոշ քանակությամբ (10, 20 և այլն) տնտեսություններին:

8. Պատգամավորական խմբակներն իրենց աշխատանքների ընթացքում ղեկավարվում են գյուղխորհրդների և այս կանոնադրություններով, նաև գյուղխորհրդի ցուցումներով:

9. Պատգամավորական խմբակներն իրենց բոլոր աշխատանքները կատարում են վորոշ ծրագրով, վոր անպայման պետք ե հաստատված լինի գյուղխորհրդի կողմից:

10. Պատգամավորական խմբակների ղեկավարները պարբերաբար հրավիրվում են՝ գյուղխորհրդի աշխատանքների վերաբերյալ հրահանգներ, կոնկրետ առաջադրություններ և ցուցումներ ստանալու համար, խորհրդակցությունների արդյունքների մասին խմբակների ղեկավարները պարտավոր են հայտնել պատգամավորական խմբակների բոլոր անդամներին և ակտիվին:

11. Գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները և գյուղխորհրդների սեկցիաները բոլոր ձեռնարկումներն իրականացնելու ժամանակ պետք ե հենվեն պատգամավորական խմբակների վրա և անպայման նրանց պետք ե մասնակից անեն իրենց աշխատանքներին:

12. Պատգամավորական խմբակները պետք ե իրենց աշխատանքների մասին պարբերաբար հաշվետվություն ներկայացնեն գյուղխորհրդի նախագահության կամ պլենումին:

13. Անգործունեյության մատնվելու, աշխատանքներից թերանալու, առաջադրությունները չկատարելու, պրոլետարական դասակարգային գիծն աշխատանքների ընթացքում աղավաղելու, կուլակային տարրերի հետ կապվելու դեպքերում, պատգամավորական խմբակների անդամների այդպիսի արարքների համար պատգամավորական խմբակները պարտավոր են անմիջապես հայտնել գյուղխորհրդին՝ համապատասխան միջոցներ ձեռք առնելու և ընտրողների առաջ հարց հարուցել նրանց հետ կանչելու մասին:

ՀՍԽՀ Կենտգործկոմի նախագահ՝ Ա. ԱՆԱՆՅԱՆ
ՀՍԽՀ Կենտգործկոմի քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

Սրբագրեցին՝ Տ. Տերունի և Ն. Հարություսյան

Պետհրատի տպարան | Գլավլիտ 7611 (բ) | Պատվեր 2137 | Տիրաժ 3000

Հանձնված ե արտադրության 2/VI 1932 Թ. Ստ. Փ. A.
Ստորագրված ե տպագրության 5/VII 1932 Թ.

Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0213457